

## ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՉԸ

Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի հիշատակին\*



**2017 թ. մարտի 24-ին կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:**

Տաղանդաշատ պատմաբանը ծնվել է 1927 թվականի սեպտեմբերի 22-ին՝ Վրաստանի Մառնեուլիի շրջանի Աղքյորփի գյուղում: Նրա ծննդավայրը Գուգարաց աշխարհի ջքնաղ բնակավայրերից մեկն է՝ Լավվար լեռան հյուսիսարևմտյան փեշերին գտնվող պատմական Խուճապի վանքի հարևանությամբ: Անցյալի հարյուրավոր հիշատակներով իր հայկականությունը հաստատող Հյուսիսային Լոռու այդ գողտրիկ անկյունում

է անցել Վ. Բարխուդարյանի մանկությունը՝ պատերազմի կորուստներն ու հետպատերազմյան դժվարությունները վերապրող հայրենակիցների շրջանում: Նման միջավայրում իր կյանքի ուղին սկսած պատանու մեջ մանկության օրերից ծնվել է անսահման սերն ու հետաքրքրությունը Հայոց պատմության ու մշակույթի հանդեպ: Ուստի համալսարանն ավարտելով՝ նա իր աշխատանքային գործունեությունը սկսել է Հայաստանի Պատմության պետական թանգարանում (1955), որից հետո աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում (1958): Այստեղ Վ. Բարխուդարյանն անցել է կրտսեր գիտաշխատողից մինչև ավագ գիտաշխատողի, ապա՝ գիտական քարտուղարի և փոխտնօրենի (1967–1990) աշխատանքային ուղին: 1990 թվականից ի վեր նա զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի, ՀՀ ԳԱԱ փոխնախագահի, Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի, ՀՀ ԳԱԱ նախագահի օգնականի

Թ. (ԺԵ) քարի, թիվ 2 (58), ամբիլ-հունիս, 2017  
ՎՎ համահայկական հանդես

\*Ընդունվել է տպագրության 15. 06. 2017:

(2011–2017) պաշտոնները:

Վ. Բարխուդարյանի գիտակազմակերպչական գործունեության վերջին հանգրվանը համընկավ ԽՍՀՄ փլուզման ու Հայաստանի անկախացման պայմաններում հայրենի գիտությանն ու մանավանդ հայագիտությանը բաժին ընկած դժվարին կացության հետ: Որպես ակադեմիական գիտության նվիրյալ՝ անցած քառորդ դարի ընթացքում Վ. Բարխուդարյանն էր հայագիտության ու մասնավորապես պատմագիտության ասպարեզի մեր այն առանցքային դեմքը, որի շուրջ համախմբված փորձառու հայագետ-գիտնականներն անցած երկուսուկես տասնամյակների ընթացքում մեծագույն գրկանքների գնով պահպանեցին լավագույն գիտական կադրերին ու միևնույն ժամանակ աշխատանքներ ծավալեցին սերնդափոխության իրականացման համար: Վ. Բարխուդարյանի սկզբունքային դիրքորոշման ու համառ ջանքերի շնորհիվ էր, որ անկախության տարիներին աճեց ու գիտական ասպարեզը գրավեց Հայոց պատմության, գրականության և այլ գիտակարգերի ուսումնասիրության գործը ներկայումս շարունակող միջին տարիքի գիտնականների սերունդը: Ավելի անկաշկանդ և գաղափարախոսական կադապարներից զերծ այդ սերնդի լավագույն ներկայացուցիչների համար Վ. Բարխուդարյանը խաղացել է փորձառու ուսուցչի ու միևնույն ժամանակ՝ սկզբունքային գործընկերոջ դերը, որի անդուլ ջանքերով կանխվել են նաև վերջին տասնամյակներում կրթության ասպարեզում լայն տարածում գտած՝ ամևտրայնացման միտումները ակադեմիական բնագավառ տեղափոխելու փորձերը:

Հայագիտության մեջ Վ. Բարխուդարյանը հայտնի է որպես Ռուսաստանի հայկական գաղթօջախների պատմության լավագույն հետազոտող, որի արդյունքներն են նրա լրջմիտ աշխատությունները՝ Նոր Նախիջևանի և Դոնի հայության, Մոսկվայի և Պետերբուրգի հայկական համայնքների ազգային-հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքի լայնահուն գիտական վերարտադրությամբ, որոնք նրան բերեցին միջազգային ճանաչում և հեղինակություն: Ավելին, ականավոր գիտնականն իր աշխատություններում հանդես է եկել ոչ միայն իբրև պատմաբան, այլ նաև առհասարակ հայ գաղթօջախների պատմության տեսաբան, որի մշակած և գիտական շրջանառության մեջ դրած հիմնադրույթները շարունակում են խթանել այս բնագավառի գիտական ուսումնասիրությունները: Նրա աշխատությունները հենվում են **գաղութագիտության** հայրենական և արտասահմանյան ուսանելի փորձի վրա, այն է՝ ոչ միայն ներկայացնել գաղթօջախների պատմությունը դրանց ազգային նկարագրի խոր բացահայտումներով, այլև ընդունող՝ ասպնջական երկրի ժողովրդի և պետության առանձնահատկությունների վերհանմամբ: Ասել կուզի՝ գաղթօջախների պատմությունը նա դիտարկել է իբրև կենդանի օրգանիզմի ապրած բարդ հոլովույթ, որոշակի հավաքականության կենսակերպի պատմություն՝ իր ինքնությունը պահպանելուն ուղղված ներուժով ու ջանքերով, կորուստներով ու ձեռքբերումներով: Այդ վերջիններն ի սպաս են դրվել գաղութաբնակ հայության ազգային արժեքների կենսունակությունը գորացնելու նպատակին:

Նոր Նախիջևանի հայության պատմությանը նվիրված իր երկու գրքե-

րում՝ Վ. Բարխուդարյանը քննության է առել այդ գաղթօջախի շուրջ 140-ամյա կենսագրությունը, որ նոր կողմերով է լրացվել դրանց ռուսերեն հրատարակության մեջ<sup>2</sup>: Իսկ նրա մյուս՝ Վ. Ոսկանյանի համահեղինակությամբ գրված աշխատությունը<sup>3</sup> ընդլայնել է հետազոտական թեմայի սահմանները՝ ներառելով Ռուսաստանի մյուս հայկական գաղթօջախների՝ Ղզլարի, Աստրախանի, Պետերբուրգի, Նոր Նախիջևանի, Գրիգորիուպոլի հայության կյանքն ու նկարագիրը:

Գաղթօջախների կենսունակության գաղտնիքը բացահայտելու տեսակետից շատ ուշագրավ է Նոր Նախիջևանին նվիրված՝ Վ. Բարխուդարյանի երկրորդ գրքի այն դրույթը, որ այդ համայնքի ինքնավարության վերացումը (1870), այսուհանդերձ, մասամբ փոխհատուցվեց ազգային հիմնարկների՝ բարեգործական, մարդասիրական ընկերությունների, եկեղեցական հոգաբարձության և այլնի գործունեությամբ: Միևնույն ժամանակ, գաղթօջախի պատմության տրամաբանությունն առարկայացնելով՝ Վ. Բարխուդարյանն այս աշխատության մեջ կիրառել է իր առաջադրած կառուցվածքային որակները՝ ամենից առաջ գաղթօջախի իրավական տեղի բնութագիրը, որից էլ (հակառակ սոցիալ-տնտեսական հարաբերությունների առաջնայնության խորհրդային պատմագիտության մարքսյան համադրությի) ածանցում են Դոնի շրջանի հունական և հայկական գյուղերի իրավատնտեսական կարգավորմանը հետամտող ցարական նահանգային վարչության ձեռնարկները՝ ըստ 1861 թ. գյուղացիական ռեֆորմի և 1871 թ. գաղթօջախների վերաբերյալ օրենքի:

Կառուցվածքային մյուս որակները գաղթօջախի ներքին կյանքի բացահայտումներն են, որոնց հետևում են սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի, քաղաքական կնձիռների ու մշակույթի վերաբերյալ վերլուծությունները: Վերադառնալով խնդրո առարկա գաղթօջախների պատմության վերը նշված՝ ռուսերեն հրատարակությանը, նկատենք, որ Վ. Բարխուդարյանը առավել ամրապնդել է իր փաստարկային հենքը՝ պատկառելի չափերի հասցնելով օգտագործած սկզբնաղբյուրները և գիտական գրականությունը: Դրանով նա հասել է Դոնի և Նոր Նախիջևանի հայկական համայնքային իրականության լայն ցուցադրմանը՝ համառուսաստանյան երևույթների ու գործընթացների, այդ թվում՝ մշակույթային իրողությունների լայն խորապատկերի վրա: Այստեղ երկրի արդյունաբերական զարգացման գործընթացը հեղինակը քննարկում է հայերի գործունեության տարբեր կողմերի նորովի վերհանումով, որով և ռուսախոս ընթերցողին ուղղված այս աշխատությունը ձեռք է բերում ճանաչողական մտածված հատկանիշներ:

Վ. Բարխուդարյանի՝ որպես պատմաբան-հետազոտողի սերնդին վիճակված էր ապրելու հասարակարգային կտրուկ բեկումների, սովորական դարձած արժեքների վերանայման և նորերի կայացման՝ դժվարին հակասությունները հաղթահարելու (կամ լռելու) փորձությունը: Այս դեպքում

1 Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը (1779-1861 թթ.), Եր., 1967, տե՛ս նաև՝ Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը (1861-1917 թթ.), Եր., 1985:  
 2 Տե՛ս **Бархударян В.** История армянской колонии Новая Нахичевань (1779-1917), Е., 1996.  
 3 Տե՛ս **Բարխուդարյան Վ., Ոսկանյան Վ.**, Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Եր., 1978:

պետք է ընդգծել Վ. Բարխուդարյանի գիտական նկարագրի առաքինությունն ու լայնախոհությունը: Նկատի ունենք նրա կողմից փաստորեն տարբեր պատմաշրջաններում՝ 1962–2008 թթ. ընթացքում, շարադրված «Պատմագիտության հարցեր»<sup>4</sup> աշխատությունը: Ուշադիր ընթերցողը դրանում կգտնի ժամանակի պատմագիտության առաջատարներ Աշ. Հովհաննիսյանի, Ս. Երեմյանի, Մ. Ներսիսյանի, Հ. Անասյանի, Աբգար Հովհաննիսյանի, Ս. Հասրաթյանի, Գ. Սարգսյանի և խորհրդային շրջանի այլ հայագետ–պատմաբանների դիմաստվերային ուրվագծերը, նրանց գիտական ներդրումների ու վաստակի անվրեպ բնութագրերը՝ այնքան կարևոր և՛ մեկը, և՛ մյուսը գնահատելու համար: Սակայն այստեղ ոչ պակաս և, թերևս, ավելի կարևոր են իր՝ հեղինակի մոտեցումները հայ պատմագետների խորհրդային սերնդին և վերջինիս տված նրա գնահատականները: Այստեղ նկատենք, որ այդ սերնդի, այդ թվում և իր՝ Վ. Բարխուդարյանի գիտական վաստակի գնահատականը դեռ շատ է տրվելու, և այս իմաստով ասված խոսքը, կարծում ենք, բնութագրական է լինելու նաև իրենց՝ գնահատողների համար: Հակառակ հախուռն շեշտադրողների՝ Վ. Բարխուդարյանը իմաստավորում է մեզ համար այնքան կարևոր՝ պատմագետների ավագ (նաև միջին) սերնդի մնայուն գիտական արդյունքները՝ համոզիչ փաստարկներով ցույց տալով ոչ միայն նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը, այլև հայ պատմագիտության ամբողջականությունը: Բավական է հիշել ականավոր պատմաբան Աշ. Հովհաննիսյանին վերաբերող դրվագը, երբ վերջինս քաղաքական արգելքների պատճառով երկար տարիներ անտիպ մնացած իր աշխատության մեջ փաստական նյութի անաչառ գնահատմամբ «իրական էր ներկայացրել Դաշնակցության ձևավորման և նրա պատմության առաջին շրջանը»<sup>5</sup>:

Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության մեջ Վ. Բարխուդարյանը կարևորագույն նշանակություն է վերապահել դրանցում առկա ազգապահպան գործոնների վերհանմանը: Արժանին հատուցելով Հայ Առաքելական եկեղեցու և Հայոց լեզվի դերի մասին դասական պատկերացումներին՝ նա հատուկ ուշադրություն է դարձրել մշակութային հաստատություններին, որոնցից առաջիններից մեկը հայկական դպրոցն էր: Դրա արդյունքը եղավ նրա «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության (XVIII դ. վերջ – XX դ. սկիզբ)»<sup>6</sup> աշխատությունը: Նրանում գաղթավայր հասկացության հիմնավորված սահմանման մեջ Վ. Բարխուդարյանն առանձնացրել է եկեղեցու և դպրոցի բացառիկ դերակատարությունը ազգային մշակույթի, ասել կուզի՝ հայրենիքից կտրված ազգի մի հատվածի ինքնապահպանման գործում: Անդրադառնալով տարրական և միջնակարգ ուսուցմանը, այդ թվում և ծխական, հոգևոր ու թեմական դպրոցներին՝ Վ. Բարխուդարյանը կարևորել է նաև դրանց մեկ այլ նշանակությունը՝ հյուրընկալ երկրի մշակույթին ու առաջավոր հասարակական մտքին հաղորդակցվելու իրողությունը: Անշուշտ,

4 Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Պատմագիտության հարցեր, Եր., 2008:

5 Նույն տեղում, էջ 7:

6 Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության (XVIII դ. վերջ – XX դ. սկիզբ), Եր., 2006:

այդպիսի հաղորդակցումը չէր կարող հարթ և միանշանակ գործընթաց լինել, ուստի հեղինակը բացահայտել է նաև ռուսական ցարիզմի ձուլո՞ղական, անհամբեր և անհանդուրժող քաղաքականության պոռթկումները (1885 թ. եկեղեցական ծխական դպրոցների մեծագույն մասի փակումը և 1903 թ. հունիսի 12-ի օրենքը Հայաստանյայց եկեղեցու և ուսումնարանների գույքի պետականացման մասին), որոնք ներկայացվել են իբրև մշակութային մերձեցման բնականոն ընթացքը խաթարող բռնարարքներ: Վերջին հանգամանքը պարզում է այն ճշմարտությունը, որ Ռուսաստանում հայ դպրոցն իր գոյատևման համար մաքառել է երկու հիմնական ուղղություններով. մի կողմից՝ պայքար ազգային կրթության ավանդությանն ուղղված (կրթության արդիականացմամբ հանդերձ) պահպանության համար և մյուս կողմից՝ պայքար ընդունող երկրի ճնշումներին դիմակայելու նպատակով: Այս ուղղությունները երկուստեք, ինչպես ցույց է տալիս հետազոտողը, կազմել են հայության ազգապահպանության, սեփական դիմագծի անաղարտության ապահովման երկու կարևոր բնագծերը:

Այս կամ այն առիթներով կամ համառոտակի Վ. Բարխուդարյանն անդրադարձել է Ռուսաստանի առաջատար հայ գաղթօջախների պատմությանը՝ դրանով կարծես ընդգծելով թեմայի հետագա զարգացման ու ամբողջականացման հարցը: Դրա շրջանցման դեպքում հիմնահարցի մշակումը կմնար թերի և ոչ ավարտուն՝ կցկտուր թողնելով առհասարակ ռուսական տարածքներում ապող հայ հանրությունների կացության և պատմամշակութային կյանքի պատկերը: Այս մտահղացմամբ ի հայտ եկավ հիմնահարցի, այսպես ասած, գլխամասային հատվածը առանձին աշխատությամբ ներկայացնելու կարիքը<sup>7</sup>: Այստեղ ևս հանրագումարի բերելով այդ գաղթօջախների ներքին, ազգային իրականությանը վերաբերող յուրահատուկ ծալքերը, հայ հանրության զբաղմունքը, մշակույթը և հարաբերությունները ռուսական տնտեսության, կրթական ու լուսավորական շարժումների, քաղաքական կյանքի իրողությունների հետ, Վ. Բարխուդարյանն առանձին հատվածներ է նվիրել նաև մայր հայրենիքի հետ նրանց կապերին: Այդ կապերը, ինչպես ցույց է տալիս նա, ազուցված էին հայրենիքին օգնելու ավանդներին, ազգային եկեղեցուն, դպրոցին ու լեզվին հավատարիմ մնալու գաղափարներին: Վ. Բարխուդարյանն առավել տպավորիչ շեշտեր է մտցնում այս գաղթօջախների անկրկնելի դիմագծերից և նկարագրից բխող ընդհանրությունների մեջ: «Այսպիսով, - գրում է նա, - հայկական գաղթօջախները իրարից ընդգծված տարբերություններ ունենալով հանդերձ, առանցքային խնդիրներում միևնույն իրավիճակում էին. նրանք կիսում էին նույն ճակատագիրը: Դա է գաղթավայրերի պատմության բնորոշ կողմը, գլխավոր առանձնահատկությունը»<sup>8</sup>:

Այստեղ նշենք հեղինակի վերհանած՝ Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմական և մի առանձնահատկությունը. դրանք պետության կողմից տրված արտոնություններից զրկվելուց հետո էլ շարունակեցին գոյատևել՝ ի տարբերություն Լեհաստանի և Հնդկաստանի գաղթօջախ-

7 Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դ. կես-XX դ. սկիզբ), Եր., 2010 (ռուսերեն հրատարակությունը՝ Եր., 2015):

8 Նույն տեղում, էջ 5:

ների, որոնք, XVIII դ. և հետո թուլանալով, բռնեցին տակավ առ տակավ մարելու ուղին: Վ. Բարխուդարյանը բացահայտում է նշված հարատևման մի գլխավոր պատճառը՝ աշխարհագրորեն մոտ լինելը Հայաստանին, ուրեմն փոխադարձ կապերի ու առնչությունների մշտական առկայությունը: Այստեղից ևս Մոսկվայի ու Պետերբուրգի հայության համագգային ընդգրկումների նշանակությունը երկուստեք էր՝ և՛ վերջիններիս, և՛ հայ իրականության համար: Վերջին գաղափարը Վ. Բարխուդարյանը զարգացրել է Հ. Ալեքսանյանի հետ համատեղ գրած աշխատության մեջ<sup>9</sup>, որը, ավանդ, վերջինը եղավ ականավոր հետազոտողի կյանքում: Այստեղ նա ցույց է տալիս արդեն Ռուսաստանի նոր՝ խորհրդային իրականության պարադոքսային ազդեցությունը հայկական գաղթօջախների ազգային կյանքի վրա: Թվում էր, թե խորհրդային իրականության մեջ հայրենիքի հետ մեկ պետություն կազմող Ռուսաստանի հայ գաղթավայրերին տրվելու էին ազգապահպանության նոր երաշխիքներ, մինչդեռ տեղի ունեցավ ձիշտ հակառակը. ազգային հանրապետությունների առկայության պայմաններում «տվյալ ազգությունը վերաբերող հարցերը կենտրոնացան այդ հանրապետություններում: Վերացան գաղութ, համայնք հասկացությունները և նրանցում գործող ազգային հասարակական կազմակերպությունները: Հայկական համայնքների հայությունը, ազգային կյանքը մնաց անորոշության մեջ»<sup>10</sup> :

Ռուսաստանի հայկական գաղթօջախների անշքացումն ու վերացումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ խորհրդային ազգային քաղաքականության իրականացման հետևանքը: Գրքի ներածության մեջ այս ենթիմաստը չկա, սակայն հեղինակների զուսպ խոսքը դառնում է առարկայական, երբ նրանք հիմնավորում են խորհրդային շրջանում ռուսահայ գաղութների «բաց մնացած» պատմության ընթացքի և դրանք պայմանավորող հիմնահարցերի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այս գիտական խնդրի լուծմանը հետագա շարունակություն ապահովելու, Ռուսաստանի հայկական գաղթօջախների ուժացման պատճառները բացահայտելու, ուրեմն մեր ժամանակներում կրկին ստվարացած այդ գաղթօջախների պահպանման բանալիները գտնելու երաշխիքներից մեկը հենց այս աշխատությունն է՝ գրված գիտական կուռ հայեցակարգով և դրա կիրառական նշանակության խոր գիտակցումով:

Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության համակողմանի ուսումնասիրությամբ Վ. Բարխուդարյանը հանդես է գալիս որպես արդիական զարգացումներին ընդառաջող հետազոտող, որը մեր այս դժվարին ժամանակներում մտահոգված է Ռուսաստանում աննախընթաց մեծ չափերի հասած հայ հանրության ազգապահպանությամբ և մայր հայրենիքի հետ նրա մշակութային կապերի զորեղացմամբ:

Վերջում կցանկանայինք ուշադրություն հրավիրել Վ. Բարխուդարյան հետազոտողի ինքնատիպ գրելաձևի վրա, որ դրսևորվել է նրա գրեթե բոլոր աշխատություններում: Նրա շարադրանքի ոճը ոչ հավակնոտ է և ոչ

9 Տե՛ս Բարխուդարյան Վ. Բ., Ալեքսանյան Հ. Ս., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Եր., 2015:

10 Նույն տեղում, էջ 5:

էլ պարտադրող, Վ. Բարխուդարյանը ոչ թե պնդում է, այլ համոզում և բնավ կարիք չունի իր ճշմարտություններն առաջ տանել իրական կամ երևութական ընդդիմախոսին մեկուսացնելու և որ նույնն է՝ նսեմացնելու հաշվին: Այսպիսի ինքնատիպ ոճը կարող է չբավարարել ոմանց «գիտական» սնափառությունը, բայց և դույզն իսկ չի կարող խանգարել ընթերցողին՝ խորանալու երևույթների էության մեջ ու միշտ հիշելու, որ հանձին ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի՝ մենք կորցրինք Հայոց պատմության փայլուն հետազոտողին և գիտության լավագույն կազմակերպչին:

Ալբերտ Ա. Խառատյան  
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Գևորգ Ս. Խուդինյան  
*Պատմ. գիտ. դոկտոր*

Albert A. Kharatyan  
Gevorg S. Khoudinyan

**OUTSTANDING SCIENTIST AND THE BEST ORGANIZER OF SCIENCE**

In memory of Academician Vladimir Barkhudaryan

Альберт А. Харатьян  
Геворг С. Худинян

**ВЫДАЮЩИЙСЯ УЧЕНЫЙ И ЛУЧШИЙ ОРГАНИЗАТОР НАУКИ**

Памяти академика Владимира Бархударяна